ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/179

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ և «Էմենջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերություն (համատեղ գործունեության պայմանագիր)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերում:

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Մուրադյանի, Գ. Ոստանիկյանի
«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17413-2019 գրությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմենջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը

(համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 16.10.2019թ.-ի թիվ 01/61-21612 գրության հիման վրա, 24.10.2019թ.-ին «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմենջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 24.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 31.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2019թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի <u>ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 16.10.2019թ.-ի թիվ 01/61-21612 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Հարությունյան Շին» ՍՊ և «էմէնՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությունները /Կոնսորցիումը/ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ մասի դրույթի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն

ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով Կարգի 46-րդ կետը՝ «ԵՔ-ՀԲՄՍ.ՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ կոնսորցիումի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի դրույթներով, առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել կոնսորցիումին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով տրամադրված (շտկված) փաստաթղթերը, գտել է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավերի 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել Կոնսորցիումի հայտը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով և Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, առաջարկում եմ կոնսորցիումի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմենջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը (բացառությամբ շտկման մասին ծանուցման), որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ.-

ի թիվ 26/26-1/17413-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Կոնսորցիումի գրավոր կարծիքը:

Կոնսորցիումը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 25.10.2019թ.-ի գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողից նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, ինչը հիմնավորվում է ստորև նշված փաստերով.

Ինչպես հայտնի է 2019թ. հոկտեմբերի 3-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4 արձանագրությունը, որի 3-րդ կետով որոշել է մերժել «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությունների /Կոնսորցիում/ հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊ և «ԿՈՆՏԵՅՆԵՐ ՊՈԼՍԿՈ» ՍՊ ընկերություններին /Կոնսորցիում/-ին:

2019թ. հոկտեմբերի 16-ին «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որով խնդրել է դադարեցնել թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումները: Պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյան կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և վերջիններիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Ձեր, այսինքն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի որոշման հիման վրա, «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի բողոքը ընդունվել է վարույթ և ԳԲՔԱ-ԼՕ-2019/74 բողոքի քննության վերաբերյալ հրավիրվել է նիստ:

Այսինքն, ստացվում է, որ անհնարին է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգի քննությունը մինչև «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով որոշում կայացնելը:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի փաստերը սույն գործի լուծման համար ունեն էական նշանակություն, այլ կերպ ասած «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի բավարարումը, ինքնին բացառում է ՀՀ ֆինանսների նախարարության կողից նախաձեռնված ընթացակարգի բավարարմանը

Նշված փաստը արդեն իսկ բավարար է ՀՀ ֆինանսների նախարարության 24.10.2019թ. 26/26-1/17413-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի քննությունը հետաձգելու համար, սակայն ցանկանում եմ ներկայացնել նաև այլ հիմքեր՝

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդված 6-րդ մասի՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Տվյալ դեպքում սույն գործով ենթադրյալ հիմքը ի հայտ է եկել 2019թ. հոկտեմբերի 3-ին /հիմք թիվ 4 արձանագրություն/:

Պատվիրատու Երևանի քաղաքապետարանի կողմից «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «ԷՄԷՆՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերության տվյալները լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, ուղարկել է 2019թ. հոկտեմբերի 16-ին:

Այսինքն, պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին գրավոր կարգով ուղարկել է ոչ թե 5 աշխատանքային օրվա ընթացքում, այլ 9-րդ աշխատանքային օրը , ինչը նշանակում է, որ չի պահպանվել ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջը:

Համաձայն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու

միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Տվյալ դեպքում պարվիրատուն որևէ օրենքով լիազորված չի եղել 9 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմնին: Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն իրականացրել է անօրինական գործողություն, որի հետևանքով բաց է թողել օրենքով սահմանված ժամկետները:

Նման պայմաններում միանշանակ պնդում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պարտավոր է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 24.10.2019թ. 26/26-1/17413-2019 գրությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «ԷմԷնՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը:»:

Ի լրումն 25.10.2019թ.-ին ներկայացված դիրքորոշման, Կոնսորցիումը 29.10.2019թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի՝ Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Տվյալ դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է ժամկետ՝ որոշակիացնելով պատվիրատուի գործողությունները, հակառակ պարագայում կստացվի, որ ցանկացած ժամանակ պատվիրատուն կարող է գրավոր կարգով դիմել լիազորված մարմնին՝ ներկայացնելով մասնակցի վերաբերյալ համապատասխան հիմքեր:

Վաղեմության ինստիտուտի կիրառումը, լինելով բողոքի, դիմումի, հայցի, մերժման մասին որոշում կայացնելու առումով բավարար հիմք, իրենից ներկայացնում է լուրջ գործողություն, որը կիրառելի է ցանկացած փուլում: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքը վարույթն ընդունելիս չի նկատել առկա օրենսդրական խախտումը, ապա մասնակցի դիմումի հիման վրա պետք է կիրառի ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով նախատեսված վաղեմության ժամկետները և մերժի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության իրավունքը արդեն իսկ դարձել է «մերկ իրավունք», ինչպես ասվում է հռոմեական իրավունքում ՝ «jus nudum»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՄԻԵԴ-ն իր կողմից կայացված վճռով նշել է, որ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգատով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):

Եվրոպական դատարանը Մինելին ընդդեմ Շվեցարիայի 25.03.1983թ. վճռի 76-րդ կետում նշել է. « ... 6-րդ հոդվածի 1-ին կետում «Դատարան» բառը պարտադիր չէ հասկանալ որպես օրենքի դասական ոճի դատարան՝ միակցված պետության ստանդարտ դատաիրավական ապարատին»:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ սույն գործով կխախտվի «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «ԷՄԷՆՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերության արդար դատական քննության իրավունքը, եթե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը անտեսի ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանված ժամկետային սահմանափակումը, եթե չապահովի իրավական որոշակիության երաշխավորումը, մասնակիցների պաշտպանությունը ժամկետանց դիմում-բողոքներից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը:

Համեմատության կարգով ցանկանում եմ նշել, որ նույնիսկ Դատարաններում, եթե հայցը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ, ապա պատասխանողի դիմումի հիման վրա, հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը: /Հիմք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մաս և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 9-րդ մաս/:

Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը կատարել է իրավախախտում, սակայն 2 ամսվա ընթացքում պատասխանատվության չի ենթարկվել, ապա այլևս չի կարող ենթարկվել /Հիմք Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մաս/ կամ եթե նույնիսկ վարչական տույժ նշանակելու մասին որոշում է կայացվել , սակայն այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, ապա այլևս ենթակա չէ կատարման /Հիմք՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 302-րդ հոդված/:

Այսինքն, ժամկետային սահմանափակման ինստիտուտը կարևոր է իրավունքի բոլոր ճյուղերում և ենթակա ավերապահ կիրառման:»:

Կոնսորցիումը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 24.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17413-2019 գրությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2019/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 22.08.2019թ.-ին հայտարարվել է թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «Էմէնջի Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա կազմակերպությունը (համատեղ գործունեության պայմանագիր):

Կոնսորցիումը «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշել է, որ «Էմէնջի Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա կազմակերպությունը հանդիսանում է Սերբիայի Հանրապետության ռեզիդենտ և վերջինս հարկ վճարողի հաշվեհամարն է՝ 101612478:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 06.09.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 20.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526 որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետը, Հանձնաժողովը արձանագրել է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

1. Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում և նշված պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ, որպես կողմ նշված է՝ ռուսերեն լեզվով («МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») Сербия և անգլերեն լեզվով («MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA» Serbia), այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի մասնակից նշված է «Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությունը:

2. Կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված 05.09.2019 թվականի կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագրում և նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում «Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերության անունից ստորագրությունը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիչի կողմից, իսկ նախկինում

կատարված նմանատիպ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիկի:

3. ISO 9001:2015 SPRS ISO 9001:2015 և ISO 14001:2015 SPRS ISO 14001:2015 սերտիֆիկատները տրվել են («MNG Plastik-Goglc doo Indjjja» ընկերությանը, իսկ TOv Rheinland կողմից տրված 0001 և 0002 սերտիֆիկատները տրվել են «MNG Plastik-Goglc doo Kralja Petra I bb 22320 Indija Serbia ընկերությանը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով, առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 03.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից տրամադրված փաստաթղթերը, արձանագրել է հետևյալը.

1) «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» («Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա) ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք. որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանություններ առկա են նաև ընկերության անվանման' անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերակների միջև: Բացի այդ, հայտում ներառված հայերեն փաստաթղթերում (հավելված 3, կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր) կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «Ինդիյա» և գհանատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել է «Инджия» (Ինջիյա): Ընդ որում այդպիսի արտասանության ճիշտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չեր առաջացնում:

2) Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019 թվականի N 3 արձանագրությունը, հանաձայնել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության միջև 10.02.2019 թվականին կազմված հանձման-ընդունման ակտը՝ «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբադան Գոգիկ»-ին փոխարինելով՝ «Սլոբադան Գոգիչ»-ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշական

է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն ընկերության տնօրենի անունը, ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ»-ը («Гогики-ը), թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտել է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավեր 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյանի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ին:

Կոնսորցիումի կողմից Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ООО «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что “МНГ Пластик-Гогик Д.О.О. Инджия” надлежащим образом и в сроки выполнила договорные обязательства по договору N 3 от 28.12.2018г. и по акту приема и сдачи для предоставленных товаров от 10.02.2019г. по договору N 3 от 28.12.2018г.. В дополнение указывается, что в вышеизложенных документах есть несоответствия в правописании и произношении букв, возникшие в результате перевода с сербского языка на русский. Принимая во внимание вышеуказанное и протокол 3 от 20.09.2019г., предоставленный членами тендерной комиссии Мэрии г. Ереван (код тендерной процедуры ԵՔ--ՀԲՄԱՊՁԲ-19/1), ООО «Сербин», как покупатель-партнер дает свое согласие в акте приема-сдачи от 10.02.2019 г., поменять фамилия-имя директора компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» на Слободан Гогич, вместо Слободан Гогик, а также добавить в указанном документе ИНН обеих сторон. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификаты (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:*

«Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյան ընկերության կողմից 24.09.2019թ.-ին Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրված տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что в полученных и предоставленных сертификатах ISO и TUV Rheinland выражение «Kralja*

Petra 1 bb 22320 Indjja Serbia» является юридическим адресом компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». В дополнении сообщаем, что в тендерных документах указанные с вашей стороны несоответствия в правописании и произношении букв, возникли в результате перевода с сербского и русского языка на армянский. Исходя из вышеизложенного, сообщаем, что «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». "MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA" и «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա являются наименованием одной и той же компании, что подтверждается налоговым кодом 101612478. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификатаы (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17413-2019 գրությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմենջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման

նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի

նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 22.08.2019թ.-ին հայտարարված թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա կազմակերպությունը (համատեղ գործունեության պայմանագիր) Հանձնաժողովի 06.09.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով, առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել մասնակցի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 03.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից տրամադրված փաստաթղթերը, արձանագրել է հետևյալը.

1) «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» («Էմէնջի Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա) ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք. որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանություններ առկա են նաև ընկերության անվանման՝ անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերականների միջև: Բացի այդ, հայտում ներառված հայերեն փաստաթղթերում (հավելված 3, կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր) կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «Ինդիյա» և գնահատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել է «Инджия» (Ինջիյա): Ընդ որում այդպիսի արտասանության ճիշտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չէր առաջացնում:

2) Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019 թվականի N 3 արձանագրությունը, հանձայնել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության միջև 10.02.2019 թվականին կազմված հանձման-ընդունման ակտը՝ «Էմէնջի

Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբադան Գոգիկ»-ին փոխարինելով՝ «Սլոբադան Գոգիչ»-ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշական է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն ընկերության տնօրենի անունը, ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ»-ը («Гогик-ը), թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտել է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավեր 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյանի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ին:

Կոնսորցիումը «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշել է, որ «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա կազմակերպությունը հանդիսանում է Սերբիայի Հանրապետության ռեզիդենտ և վերջինս հարկ վճարողի հաշվեհամարն է՝ 101612478:

Կոնսորցիումի կողմից Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ՕՕՕ «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что “МНГ Пластик-Гогик Д.О.О. Инджия” надлежащим образом и в сроки выполнила договорные обязательства по договору N 3 от 28.12.2018г. и по акту приема и сдачи для предоставленных товаров от 10.02.2019г. по договору N 3 от 28.12.2018г.. В дополнение указывается, что в вышеизложенных документах есть несоответствия в правописании и произношении букв, возникшие в результате перевода с сербского языка на русский. Принимая во внимание вышеуказанное и протокол 3 от 20.09.2019г., предоставленный членами тендерной комиссии Мэрии г. Ереван (код тендерной процедуры ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1), ООО «Сербин», как покупатель-партнер дает свое согласие в акте приема-сдачи от 10.02.2019 г., поменять фамилия-имя директора компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» на Слободан Гогич, вместо Слободан Гогик, а также добавить в указанном документе ИНН обеих сторон. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификаты (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик*

Д.О.О Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:

«Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյանի կողմից 24.09.2019թ.-ին Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրված տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что в полученных и предоставленных сертификатах ISO и TUV Rheinland выражение «Kralja Petra 1 bb 22320 Indjja Serbia» является юридическим адресом компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». В дополнении сообщаем, что в тендерных документах указанные с вашей стороны несоответствия в правописании и произношении букв, возникли в результате перевода с сербского и русского языка на армянский. Исходя из вышеизложенного, сообщаем, что «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». "MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA" и «Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա являются наименованием одной и той же компании, что подтверждается налоговым кодом 101612478. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификатаы (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:*

ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության լույսի ներքո, վերջինիս սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշված «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև գործում առկա «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ՕՕՕ «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերության կողմից 24.09.2019թ.-ին Հանձնաժողովին տրված տեղեկանքները, փաստում է, որ «МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия», ինչպես նաև «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա անվանումները վերաբերում են ընթացակարգին դիմում ներկայացրած «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը, քանի որ, ինչպես վերը նշվեց, հարկ վճարողի հաշվառման համարը

հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղված գրության մեջ առկա չէ Կոնսորցիումին ուղարկված՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցման օրինակը, որը հնարավորություն չի տալիս գնահատել և արձանագրել հանձնաժողովի կողմից արձանագրված, սակայն Կոնսորցիումի կողմից անհամապատասխանությունները թերի շտկելու՝ ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ» անվանումը «Գոգիչ» անվամբ չշտկելու հանգամանքը: Այն դեպքում, երբ «Սերբին» ընկերության կողմից տրամադրված տեղեկանքով կշտկվեր նաև ընկերության անվանման բաղադրիչում տեղ գտած վրիպակը: Ընդ որում, դրա իրական հնարավորությունը Կոնսորցիումը ունեցել է, ինչպես և արձանագրել է Հանձնաժողովը: Հատկապես այն դեպքում, երբ թե ընկերության բաղադրիչ հանդիսացող անվանումը և թե ընկերության տնօրենի ազգանունը նույնանում են:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», ինչպես նաև «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա անվանումները վերաբերում են ընթացակարգին դիմում ներկայացրած «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը, քանի որ հարկ վճարողի հաշվառման համարը հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմենջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից, հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, համաձայն որոնց՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կոնսորցիումի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Կոնսորցիումին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմամբ նշված այլ փաստերին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերոնշյալով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմենջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է, իսկ նման պայմաններում, բացակայում է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը, որպիսի հանգամանքներում վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են, ուստի Մասնակցի կողմից նշված մյուս հիմքերին ու հիմնավորումներին, Բողոքներ քննող անձը չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17413-2019 գրությամբ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմենջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/179 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**